ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/15

ք. Երևան **«27» մայիսի 2020թ.**

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ **գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<Վի Իքս Սոֆթ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Վահագն Մխիթարյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության(**Հավելված 3)** ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով(**Հավելված 3.1)**՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը(**Հավելված 3.1)** և հանձնման-ընդունման արձանագրության(**Հավելված 3)**՝ **2 (երկու)** օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տաս)** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է՝

ա) 2020 թվականի համար ընդհանուր՝ 16800000 (տասնվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ) 2021 թվականի համար ընդհանուր՝ 28800000 (քսանութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: **2020 թվականի համար դրամական միջոցների փոխանցումը կկատարվի պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: 2021 թվականի համար մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվեն համապատասխան ֆինանսական միջոցների հատկացնելուց հետո Կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրի հիման վրա:** Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.1.1 **2021 թվականի համար Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման պայման է հանդիսանում այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով, որն էլ հանդիսանում է Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1, հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն **ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8** **ՀՀ ֆինանսների նախարարության** **գործառնական վարչություն** **Հ/Հ՝ 900011018547** **ՀՎՀՀ՝ 02506264**	**«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ** **ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6** **«Ամերիաբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 1570020[illegible]** **ՀՎՀՀ [illegible]**
Ս.Գալստյան	**Վ.Մխիթարյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	

Հավելված N 1
«27» մայիսի 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72511700/11	**www.e-register.am, էլեկտրոնային համակարգի սպասարկման ծառայություններ՝ համաձայն ստորև տեխնիկական առաջադրանքի:**	**դրամ**	**ա) 2020 թվականի համար ընդհանուր՝ 16800000 (տասնվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, բ) 2021 թվականի համար ընդհանուր՝ 28800000 (քսանութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,**	1	**ք.Երևան**	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2021թ., ընդ որում՝ 2020 թվականի ծառայությունների մատուցման վերջնաժամկետն է 20.12.2020թ., իսկ 2021, թվականի համար ծառայությունների մատուցման պայման է հանդիսանում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ համաձայնագրերի կնքումը և 2021 թվականի ծառայությունների մատուցման վերջնաժամկետն է 20.12.2021թ.:**
Ծառայության ամսականը գինը՝ 2400000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ							

www.e-register.am էլեկտրոնային համակարգի սպասարկման ծառայությունների տեխնիկական առաջադրանք:

Տեխնիկական բնութագիր

Սույն տեխնիկական առաջադրանքը վերաբերվում է ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի ծրագրային, տեխնիկական և խորհրդատվական սպասարկման ծառայությունների մատուցմանը:

1. Փաստաթղթի մասին

Փաստաթղթում նկարագրված են վերոնշյալ համակարգերի գործառույթների ամփոփ նկարագրությունը, սպասարկման ծառայությունների ընթացակարգը և այլ մարմինների հետ տվյալների փոխանակման կարիքները:Նկարագրված են տեխնիկական խնդիրների լուծման և ծրագրային մշակումների ներդրման կարգը:

2. Ներածություն

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական- որոնողական ավտոմատացված www.e-register.am համակարգը (այսուհետ՝ www.e-register.am համակարգ) ապահովում է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից օրենքով նախատեսված գործառույթների իրականացումը: Համակարգի ներդրումը սկսվել է 2011 թ. ապրիլից և ներկա պահին այն իր մեջ ներառում է հետևյալ տվյալների շտեմարանները, ենթահամակարգերը և տվյալների փոխանակման մոդուլները՝

- Իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստր
- Տվյալների տրամադրման և բեռնման առցանց մոդուլ

- Սահմանափակումների կիրառման մոդուլ
- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հարկատու 3 համակարգի հետ տվյալների փոխանակման մոդուլ,
- ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրի հետ տվյալների փոխանակման մոդուլ,
- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ փոխգործելիության հարթակի հետ տվյալների փոխանակման մոդուլ

3. Ծառայությունների ընդհանուր նկարագրությունը

3.1. Իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստր

Հիմնական գործառույթներ՝

- ՀՀ-ում գործունեություն իրականացնող Իրավաբանական անձանց (ԻԱ) էլեկտրոնային գրանցամատյանի վարում, այդ թվում իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալների գրառում՝ ներառյալ
    - Անհատ ձեռնարկատեր,
    - Անհատական ձեռնարկություն,
    - Գյուղացիական անհատական ձեռնարկություն,
    - Ընտանեկան ձեռնարկություն,
    - Գյուղացիական ընտանեկան ձեռնարկություն,
    - Լիակատար (տնտեսական) ընկերակցություն,
    - Կոմանդիտային տնտեսական ընկերակցություն,
    - Առանձնացված ստորաբաժանում (Ոչ առևտրային),
    - Դուստր ձեռնարկություն,
    - Արտադրական կոոպերատիվ,
    - Սպառողական կոոպերատիվ,
    - Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն,
    - Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
    - Փակ բաժնետիրական ընկերություն
    - Բաց բաժնետիրական ընկերություն
    - Պետական (իշխանության տեղական մարմնի) ձեռնարկություն
    - Իրավաբանական անձանց միություն(ոչ առևտրային)
    - Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն
    - Ինքնակարգավորվողկազմակերպություն
    - Հիմնադրամ
    - Հասարակական կազմակերպություն
    - Կուսակցություն
    - Կրոնական կազմակերպություն
    - Պետական կառավարչական հիմնարկ
    - Համատիրություն
    - Լրատվության միջոց
    - Արհեստակցական կազմակերպություն
    - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
    - Առևտրա-արդյունաբերական պալատ
    - Ջրօգտագործողների ընկերություն
    - Ակտիվների համախումբ
    - Ջրօգտագործողների ընկերությունների միություն
    - ԿԲ կողմից գրանցված կազմակերպություն
    - Նախկին գործկոմներում գրանցված իրավաբանական անձ
    - Գյուղատնտեսական վարկային ակումբ
    - Փաստաբանների պալատ

- Գործատուների միություն
- Առանձնացված ստորաբաժանում
- Հիմնարկ
- Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- Պետռեգիստրից դուրս գրանցված հիմնարկ
- Համայնքային կառավարչական հիմնարկ
- Հիմնարկ (հիմնադիր՝ ոչ առևտրային)
- Իրավաբանական անձանց միություն (առևտրային)
- Ֆինանսական հաստատություն
- Արտասահմանյան բանկի ներկայացուցչություն
- Միջկառավարական համաձայնագիր
- Ոչ առևտրային կազմակերպություն
- Փոքր ձեռնարկություն
- Հասարակական-քաղաքական կազմակերպություն
- Միջկառավարական ոչ առևտրային կազմակերպություն
- Գյուղատնտեսական կոոպերատիվ
- Անձեռնմխելի Կապիտալով Հիմնադրամ
- Պետական մասնագիտացված տնտեսություն
- Պետական մարմին
- Ոչառևտրայինկոոպերատիվկազմակերպություն
- Միջկառավարական ոչ առևտրային կազմակերպություն
- Գյուղատնտեսական կոոպերատիվ
- Անձեռնմխելի Կապիտալով Հիմնադրամ
- Պետական մասնագիտացված տնտեսություն
- Պետական մարմին
- Ոչ առևտրային կոոպերատիվ կազմակերպության գրանցում
- Գրանցված իրավաբանական անձանց տեղեկությունների փոփոխությունների գրանցում
- Գրավի և գույքի նկատմամբ սահմանափակումների կիրառում

3.1.1. Տվյալների տրամադրման և բեռնման առցանց մոդուլ

Հիմնական գործառույթներ՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրային տվյալների բեռնում,
- Գործող իրավաբանական անձանց մասին հաշվետվությունների ներկայացում,
- Պետական այլ շահագրգիռ գերատեսչություններին իրավաբանական անձանց մասին տվյալների տրամադրում,
- Տվյալների փոխանակման ապահովում ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալների շտեմարանի և www.e-register.am համակարգի միջև,
- ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գույքի նկատմամբ սահմանափակումների կիրառման մոդուլ:

Վերոնշյալ համակարգերի և ռեգիստրների ծրագրային և տեխնիկական սպասարկումը ներառում են հետևյալ աշխատանքները՝

1. Շահագործման ընթացքում առաջացող տեխնիկական և ծրագրային խնդիրների շտկում, որոնք առաջացել են ծրագրային ապահովման կամ մարդկային սխալի հետևանքով:
2. ՀՀ օրենսդրության փոփոխման արդյունքում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների իրականացում:
3. ՏՀ անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների (Linux, MySQL, PHP, Apache) թարմացումների տեղադրում:
4. Այլ մարմինների հետ տվյալների փոխանակման և ներկայացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման աջակցություն:
5. ԱՆ կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների պատրաստում

6. ԱՆ կողմից տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացում:
7. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում:
8. ԱՆ պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում;
9. ԱՆ կողմից համապատասխան ստորաբաժանման ներկայացմամբ բոլոր խնդիրների արձանագրում և տեխնիկական նկարագրության պատրաստում, համակարգերի նոր տարբերակների ստեղծման աշխատանքներում ներգրավվելու նպատակով:
10. Օգտվողների աջակցություն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 50 տարածքային ստորաբաժանումներ շուրջ 1000 օգտվողի համար:
11. Օգտվողների սպասարկում բազմագիծհեռախոսագծով սպասարկման կենտրոնով աշխատանքային օրերին և ժամերին (5/8):
12. Համակարգերի ընթացիկ բոլոր թարմացումների և նորացումների անվճար տեղադրում, բացառությամբ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքում,
13. Պատվիրատուի պահանջով կատարել սերվերներիօպերացիոն համակարգերի տեղադրում, համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր:
14. Կատարել սերվերների ծրագրային ապահովման, օպերացիոն համակարգերի թարմացում ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար:
15. Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում:
16. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում:
17. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգերում ընթացակարգերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում:
18. Պատվիրատուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում:
19. Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում:
20. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից:
21. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացում:
22. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում:
23. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխություններ և լրացումներ:

Մասնակցին ներկայացվող այլ պահանջներ:

1. Հեռախոսային կենտրոն, առնվազն վեց միաժամանակյա մուտքով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

Ս.Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

«Վի Իքս Սոֆթ»
«ВИ ИКС СОФТ»
/ստորագրություն/«VXSOFT»
Կ.Տ

Հավելված N 2
«27» մայիսի 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72511700/11	www.e-register.am, էլեկտրոնային համակարգի սպասարկման ծառայություններ	-	-	-	-	-	-	2400000	4800000	7200000	9600000	12000000	16800000	16800000 (տասնվեց միլիոն ութ հարյուր հազար)

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

Ս.Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«27» մայիսի 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«27» մայիսի 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի

անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն